ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<Սայաթ-Նովա>> մշակութային միությունը 2012 թվականի հուլիսի 10-30-ը կազմակերպում է ժողովրդական և աշուղային երգի ժանրերում ինքնուս ստեղծագործողների հանրապետական փառատոն՝ նվիրված մեծ աշուղ Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին:

Փառատոնին կարող է մասնակցել յուրաքանչյուր ոք՝ առանց տարիքային սահմանափակման:

Մարզային փուլը կկայանա հուլիսի 10-25-ը, ունկնդրումը կանցկացնի Երևանից ժամանած հանձնախումբը՝ ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Թովմաս Պողոսյանի գլխավորությամբ:

Մարզային փուլի մասնակիցները պետք է ներկայացնեն երկու հեղինակային երգ՝ նվագակցությամբ կամա առանց նվագակցության:

Մարզային փուլին մասնակցության հայտերը ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժին՝ մինչև սույն թվականի հուլիսի 5-ը: